

ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍՏԱՆԴԱՐՏԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն որոշման N 1 հավելվածով սահմանված ստանդարտում (այսուհետ՝ Ընդհանուր ստանդարտ) ներկայացված սկզբունքները տարածվում են նաև մեքենաների, սարքերի, սարքավորումների և այլ շարժական գույքերի (այսուհետ՝ Շարժական գույք) ինչպես նաև պաշարների և պահուստային բաղադրիչների (այսուհետ՝ Պաշար) գնահատման վրա: Սույն հավելվածում ներկայացված պահանջները և լրացուցիչ սկզբունքները ցույց են տալիս Ընդհանուր ստանդարտում ներկայացված պահանջների կիրառումը սույն հավելվածի շրջանակներում:

2. Շարժական գույքերը նյութական ակտիվներ են, որոնք նախատեսված են արտադրությունում օգտագործելու կամ ապրանքների ու ծառայությունների մատակարարումն ապահովելու համար, ինչպես նաև այլ անձանց վարձակալության հանձնման կամ կառավարչական նպատակների համար, ընդ որում, դրանց օգտագործումը նախատեսվում է որոշակի ժամանակահատվածում:

3. Սույն հավելվածի իմաստով Պաշար են համարվում ապրանքները, որոնք պետք է օգտագործվեն ապագա արտադրական գործընթացներում (հումք, մասեր, նյութեր), արտադրական գործընթացում օգտագործվող ապրանքները (անավարտ արտադրություն) և ապրանքները, որոնք սպասում են վաճառքի (պատրաստի արտադրանք):

4. Շարժական գույքի օգտագործման իրավունքի գնահատման դեպքում պետք է առաջնորդվել սույն հավելվածով սահմանված պահանջներով: Գնահատվող օբյեկտի օգտագործման իրավունքի ժամկետը և շահագործման ժամկետը կարող

է տարբերվել, և նման պայմաններում անհրաժեշտ է նշել շահագործման տևողությունը: Շահագործման տևողությունը հաշվի է առնում տեխնիկական կանոնակարգերով սահմանված պրոֆիլակտիկ և կանխարգելիչ տեխնիկական սպասարկումը:

5. Այն գնահատվող օբյեկտը, որոնց համար առավել արդյունավետ օգտագործումը հանդիսանում է օբյեկտների խմբի կազմում տնտեսական օգտագործումը, պետք է գնահատել հետևողական ենթադրությունների օգտագործմամբ: Բացառությամբ այն դեպքերի, երբ ենթահամակարգերին պատկանող օբյեկտները չեն կարող ողջամտորեն առանձնացվել իրենց հիմնական համակարգից, ենթահամակարգերը կարող են գնահատվել առանձին՝ օգտագործելով հաջորդական ենթադրությունները ենթահամակարգերի ներսում, շղթայական մինչև ենթահամակարգեր և այլն:

6. Շենք-շինությունների կազմում ընդգրկված կոմունալ ծառայությունների սպասարկման հետ կապված Շարժական գույքն իրենից ներկայացնում է կառույցի հետ մեկ միասնական ամբողջություն և դրանց տեղադրումից հետո հնարավոր չէ տարանջատել: Այս օբյեկտները, որպես կանոն, ներառվում են անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքի կազմում: Նման օբյեկտներ հիմնականում համարվում են այն Շարժական գույքերը, որոնց գործառույթը կայանում է էլեկտրաէներգիայի, գազի, ջեռուցման, հովացման կամ օդափոխության համակարգերի աշխատանքի ապահովումը: Այն դեպքերում, երբ գնահատման նպատակից կախված անհրաժեշտ է, որ Շարժական գույքերը գնահատվեն առանձին, ապա գնահատման առաջադրանքը ձևակերպելիս պետք է նշվի, որ վերը նշված գնահատման օբյեկտները պետք է ներառվեն անշարժ գույքի ընդհանուր գույքային իրավունքի կազմում և չեն կարող օտարվել առանձին: Միևնույն վայրում գտնվող, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սույն հավելվածով սահմանված օբյեկտների խմբի գնահատման հետ կապված առաջադրանքների դեպքում պետք է բացառել կրկնակի հաշվարկը կամ բացթողումը:

7. Շարժական գույքի հիմնական մասի տեղափոխության բազմակողմանիությամբ պայմանավորված՝ անհրաժեշտ է դիտարկել լրացուցիչ ենթադրություններ՝ նկարագրելու այն իրավիճակը և հանգամանքները, որոնց շրջանակում

իրականացվում է նման օբյեկտների գնահատումը: Ընդհանուր ստանդարտի 9-րդ կետով սահմանված պահանջների պահպանման նպատակով նման ենթադրությունները պետք է դիտարկվեն և ներառվեն գնահատման առաջադրանքում: Ստորև ներկայացված ենթադրությունները կարող են տարբեր հանգամանքներում նպատակահարմար լինել՝

1) շարժական գույքը գնահատվում է որպես մեկ միասնական ամբողջություն դրանց տեղադրման վայրում՝ ելնելով ենթադրությունից, որ արտադրական գործունեությունը դեռ չի ծավալվել,

2) շարժական գույքը գնահատվում է որպես մեկ միասնական ամբողջություն դրանց տեղադրման վայրում՝ ելնելով ենթադրությունից, որ ձեռնարկությունը փակվում է,

3) շարժական գույքը գնահատվում է որպես մեկ միասնական ամբողջություն դրանց տեղադրման վայրում՝ ելնելով ենթադրությունից, որ տեղի է ունենում հարկադիր վաճառք,

4) շարժական գույքը գնահատվում է առանձին՝ իր ներկա գտնվելու վայրից տեղափոխվելու նպատակով:

8. Ի հավելումն Ընդհանուր ստանդարտի 7-րդ գլխում արտացոլված պահանջների, Շարժական գույքի գնահատման հաշվետվությունը պետք է պարունակի համապատասխան հղումներ գնահատման առաջադրանքի շրջանակում բարձրացված խնդիրների վերաբերյալ: Հաշվետվությունը պետք է նաև ներառի մեկնաբանություն վերջնական (եզրափակիչ) արժեքի ազդեցության վերաբերյալ՝ ելնելով փաստացի կամ ենթադրյալ գործարքի սցենարից:

9. Շարժական գույքի գնահատումն իրականացվում է տարբեր նպատակների համար, այդ թվում՝ ֆինանսական հաշվետվությունը, լիզինգը, երաշխավորված վարկավորումը, շահագործումից հանելը, հարկումը, դատավարության և սնանկության վարույթը:

10. Պաշարների հաշվեկշռային արժեքը ներառում է միայն նախկինում կատարված ծախսերը և արտադրական գործընթացում ստացված շահույթը, որն արտացոլում է արտադրության մեջ օգտագործվող օբյեկտների շահույթները,

որոնք չեն կապիտալացվում արժեքի հաշվեկշռում: Արդյունքում, պաշարների շուկայական արժեքը հիմնականում տարբերվում է պաշարների հաշվեկշռային արժեքից:

2. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Շարժական գույքը գնահատելիս պետք է հաշվի առնել այն գործոնները, որոնք անմիջականորեն կապված են գնահատվող օբյեկտի շրջակայքի, ինչպես նաև ֆիզիկական, ֆունկցիոնալ և տնտեսական ներուժի հետ: Նման դեպքերում անհրաժեշտ է իրականացնել նույնականացման գործընթաց (պետք է իրականացվեն գնահատվող օբյեկտի տեղագնման աշխատանքներ գնահատվող օբյեկտի վիճակը պարզելու, տրամադրված տեղեկատվության օգտագործման և վերաբերելիության տեսանկյունից պիտանելիությունը որոշելու համար): Վերը բերված գործոններն են.

1) Անմիջականորեն գնահատվող օբյեկտի հետ կապված՝

ա. տեխնիկական բնութագիրը,

բ. մնացորդային օգտակար տնտեսական կյանքի տևողությունը կամ արդյունավետ օգտագործման տևողությունը՝ հաշվի առնելով տեխնիկական կանոնակարգերով սահմանված պրոֆիլակտիկ և կանխարգելիչ տեխնիկական սպասարկումը,

գ. գնահատվող օբյեկտի վիճակը՝ ներառյալ տեխնիկական սպասարկման վերաբերյալ տվյալները,

դ. գործառնական, ֆիզիկական և տեխնոլոգիական ցանկացած մաշվածությունը (հնացումը),

ե. եթե գնահատումը չի իրականացվում գնահատվող օբյեկտի ընթացիկ գտնվելու վայրում, ապա դրա ապամոնտաժման, տեղափոխման, վերագործարկման ծախսերը, ինչպես նաև գնահատվող օբյեկտը շահագործման վիճակի բերելու բոլոր ծախսերը,

գ. վարձակալության նպատակով օգտագործվող Շարժական գույքի համար պետք է դիտարկել վարձակալության ժամկետի երկարաձգման տարբերակներ և վարձակալության ժամկետի ավարտի պահին այլ հնարավորություններ,

է. փոխկապակցված ակտիվների ցանկացած հնարավոր կորուստ,

ը. լրացուցիչ ծախսեր՝ կապված լրացուցիչ սարքավորումների ձեռքբերման, տեղափոխման, տեղադրման և մոնտաժման հետ և այլն,

թ. այն դեպքերում, երբ Շարժական գույքի վերաբերյալ ծախսերի խրոնոլոգիական (պատմական) տվյալները հասանելի չեն, գնահատողը կարող է օգտվել նախագծման, գնումների, նյութատեխնիկական և շինարարության պայմանագրերի հղումներից:

2) Շրջակայքի հետ կապված գործոններ՝

ա. գտնվելու վայրը. կապված հումքի աղբյուրի կամ արտադրված ապրանքի շուկայի հետ: Գտնվելու վայրի պիտանելիությունը կարող է ծանրաբեռնված լինել ժամկետային սահմանափակմամբ,

բ. օրենսդրական ազդեցություն. որոնք սահմանափակում են գնահատվող օբյեկտի օգտագործումը կամ առաջացնում են լրացուցիչ գործառնական ծախսեր,

գ. ոռոգիակտիվ նյութեր. որոնք կարող են պարունակվել որոշակի Շարժական գույքում, զգալի ազդեցություն են ունենում, եթե դրանք պատշաճ կերպով չեն շահագործվում կամ պատշաճ կերպով չեն ուտիլիզացվում, և նշված պայմանների առկայության դեպքում զգալիորեն աճում են ծախսերը,

դ. թունավոր թափոններ. որոնք կարող են լինել քիմիական՝ պինդ, հեղուկ կամ գազային վիճակում, պետք է պահեստավորվեն և ուտիլիզացվեն պատշաճ կերպով, ինչը կարևոր է արտադրության կազմակերպման համար,

ե. որոշ Շարժական գույքերի շահագործման արտոնագրերը որոշ երկրներում կարող են սահմանափակվել:

3) Տնտեսության հետ կապված գործոններ՝

ա. գնահատվող օբյեկտի փաստացի կամ հնարավոր եկամտաբերություն. հիմնված շահագործման ծախսերի և ակնկալվող կամ փաստացի եկամուտների համեմատության վրա,

բ. շարժական գույքի միջոցով արտադրված արտադրանքի պահանջարկ. հաշվի առնելով պահանջարկի վրա ազդեցություն ունեցող մակրոտնտեսական և միկրոտնտեսական գործոնները,

գ. գնահատվող օբյեկտն առավել արդյունավետ օգտագործելու հնարավորություն, ի տարբերություն դրա ընթացիկ օգտագործման:

12. Շարժական գույքը գնահատելիս պետք է հաշվի առնել բոլոր տեսակի մաշվածությունները (հնացումները):

13. Գնահատվող օբյեկտի (ակտիվի կամ պարտավորության) նույնականացման գործընթացն ապահովելու նպատակով, Ընդհանուր ստանդարտի 9-րդ կետով սահմանված դրույթներին համապատասխան, կախված արժեքի վրա ազդեցություն ունեցող հանգամանքներից, անհրաժեշտ է հաշվի առնել գնահատվող օբյեկտի միացման կամ ինտեգրման հնարավորությունն այլ օբյեկտի հետ: Մասնավորապես.

1) գնահատվող օբյեկտը կարող է ամրակայված լինել հողին կամ շինությանը և չեն կարող տեղափոխվել առանց էական վնաս պատճառելու գնահատվող օբյեկտին կամ շինությանը,

2) առանձին մեքենան, սարքը կամ սարքավորումը կարող է հանդես գալ արտադրական հոսքագծի բաղկացուցիչ մաս, որի գործածումը կախված է այլ օբյեկտներից,

3) գնահատվող օբյեկտը կարող է դասակարգվել որպես անշարժ գույքի բաղկացուցիչ մաս (օրինակ՝ ջեռուցման, օդափոխման և օդորակման համակարգեր):

14. Վերը նշված հանգամանքների առկայության դեպքում անհրաժեշտ է որոշել կոնկրետ հանգամանքը և դրանց մասին տեղեկությունները ներկայացնել հատուկ ենթադրությունների ձևակերպման միջոցով:

15. Շարժական գույքի գնահատման հաշվետվությունը պարտադիր պետք է պարունակի գնահատվող օբյեկտի տեղագնության արդյունքները (լուսանկարները), եթե այլ բան գնահատման առաջադրանքով սահմանված չէ:

3. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԺԵՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

16. Ընդհանուր ստանդարտի 3-րդ գլխում («Գնահատման արժեքի տեսակները»), սահմանված դրույթների համաձայն, Շարժական գույքի և Պաշարների գնահատման ժամանակ գնահատողը պետք է ընտրի համապատասխան գնահատման արժեքի տեսակը:

17. Գնահատման արժեքի կիրառումը և դրա հետ կապված գնահատման նախադրյալները (Ընդհանուր ստանդարտ, գլուխ 4) չափազանց կարևոր են Շարժական գույքի գնահատման ժամանակ, քանի որ կախված գնահատման նպատակից («հարկադիր վաճառք», «արժեքն օգտագործման մեջ», «կանոնակարգված օտարում» և այլն)՝ կարող է լինել արժեքի տարբերություն:

18. Պաշարների գնահատման ժամանակ Ընդհանուր ստանդարտի 3-րդ գլխում սահմանված դրույթներից բացի գնահատողը պետք է առաջնորդվի նաև Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով, նախադեպային որոշումներով և այլ միջազգային պայմանագրերով՝ հղում կատարելով արժեքի տեսակներին գնահատման ամսաթվի դրությամբ:

4. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

19. Շարժական գույքի և Պաշարների գնահատման դեպքում, կախված դրա բնույթից, առկա տեղեկատվությունից և գնահատման հետ կապված փաստերից ու հանգամանքներից, կիրառվում են բոլոր հիմնական մոտեցումները և մեթոդները, որոնք սահմանված են Ընդհանուր ստանդարտով:

20. Եթե անհրաժեշտ է գնահատումն իրականացնել երեք մոտեցումներից որևէ մեկի սահմանված մեթոդով, ապա գնահատողը պետք է հիմնավորի կայացրած որոշումն Ընդհանուր ստանդարտի 46-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջի համաձայն:

21. Մոտեցման և մեթոդի ընտրության ժամանակ, բացի սույն հավելվածի պահանջներից, գնահատողը պետք է առաջնորդվի Ընդհանուր ստանդարտի 5-րդ գլխի 32-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով:

22. Համեմատական մոտեցումը, որպես կանոն, օգտագործվում է միատարր Շարժական գույքի գնահատման ժամանակ, դրանց շարքին կարող են դասվել տրանսպորտային միջոցները, գրասենյակային սարքերը, սարքավորումները և արդյունաբերական սարքավորումների որոշ տեսակները՝ նման օբյեկտների վերջին վաճառքների վերաբերյալ բավարար քանակի տվյալներ հավաքագրելու հնարավորությամբ պայմանավորված: Շարժական գույքի շատ տեսակներ, իրենց ֆունկցիոնալ առանձնահատկությունից ելնելով (հատուկ նշանակության), բաց հրապարակային շուկայում հազվադեպ են հանդիպում կամ վաճառքի վերաբերյալ տվյալները հասանելի չեն: Նման դեպքերում պետք է դիտարկել գնահատման եկամտային կամ ծախսային մոտեցումների կիրառման հնարավորությունը:

23. Եկամտային մոտեցումը կարող է կիրառվել Շարժական գույքի գնահատման ժամանակ, եթե օբյեկտի կամ փոխկապակցված օբյեկտների խմբի համար հնարավոր է հաշվարկել դրամական հոսքերը: Եկամտային մոտեցման կիրառումը սովորաբար չի գործածվում Շարժական գույքի առանձին միավորների համար, սակայն այն կարելի է կիրառել օբյեկտի կամ օբյեկտների խմբի տնտեսական մաշվածությունը որոշելու համար:

24. Եկամտային մոտեցման կիրառման դեպքում պետք է հաշվի առնել օբյեկտի ծառայության ժամանակահատվածում և ծառայության ժամանակահատվածի վերջում ակնկալվող դրամական հոսքերը:

25. Շարժական գույքը գնահատելիս ծախսային մոտեցումը կիրառվում է հատկապես հատուկ նշանակության օբյեկտների գնահատման ժամանակ: Անհրաժեշտ է հաշվարկել գնահատվող օբյեկտի ծախսերը՝ ելնելով այն հանգամանքից, թե որ տեսակի ծախսերն են առավել ցածր ստացվելու՝ փոխարինման ծախսերը, թե վերարտադրման ծախսերը:

26 Որոշակի հանգամանքներում գնահատվող օբյեկտի ձեռքբերման կամ ստեղծման համար փաստացի կատարված ծախսերը նպատակահարմար է ընդունել որպես փոխարինման ծախսեր: Սակայն, նախքան հետհայաց ծախսերի մասին տեղեկատվությունն օգտագործելը, գնահատողը պետք է նկատի ունենա հետևյալը.

1) Հետհայաց ծախսերի առաջացման ժամկետները: Փաստացի կատարված ծախսերը կարող են չարտացոլել փոխարինման իրական ծախսը գնահատման ամսաթվի դրությամբ, որի պայմաններում, կապված գնաճի ինդեքսավորման, սղաճի կամ այլ շուկայական գործոնների հետ, անհրաժեշտ է ճշգրտում կատարել:

2) Շուկայի կոնկրետ մասնակցից ծախսերի կամ եկամտաբերության մասին ստացված տվյալները կարող են չարտացոլել այն ծախսերի իրական մակարդակը, որոնք կարող էին կրել տիպիկ մասնակիցները: Հետհայաց ծախսերը համապատասխան ցուցանիշների օգտագործման միջոցով պետք է արդիականացվեն և համապատասխանեցվեն ներկա ժամանակին:

3) Արժեքում ներառված կոնկրետ ծախսեր: Գնահատողը պետք է հաշվի առնի ներառված բոլոր ծախսերը, ինչպես նաև պետք է որոշի այդ ծախսերի ազդեցությունը գնահատվող օբյեկտի արժեքի ձևավորման վրա:

4) Ոչ շուկայական բաղադրիչներ: Ցանկացած ծախս, զեղչ կամ հատուցում, որը չի կատարվել կամ հասանելի չէ շուկայի տիպային մասնակիցների կողմից, պետք է բացառվի դիտարկումից:

27. Փոխարինման ծախսերը որոշելուց հետո պետք է հաշվի առնել ֆիզիկական, գործառնական, տեխնոլոգիական և տնտեսական մաշվածքները:

28. Ծախսերի և հզորության հարաբերակցության մեթոդի համաձայն գնահատվող օբյեկտի փոխարինման ծախսերը փաստացի կամ անհրաժեշտ հզորությամբ կարող են որոշվել մեկ այլ հզորությամբ անալոգային օբյեկտի վրա կատարված ծախսերի հիման վրա:

29. Ծախսերի և հզորության հարաբերակցության մեթոդը սովորաբար օգտագործվում է երկու եղանակներից մեկով՝

1) Գնահատվող օբյեկտի հզորությունների փոխարինման ծախսերի հաշվարկային գնահատում, երբ հայտնի են մեկ այլ հզորության օբյեկտի փոխարինման ծախսերը,

2) փոխարինման ծախսերի հաշվարկային գնահատում, կախված ժամանակակից և համարժեք օբյեկտի հատկություններից՝ հզորություն/արտադրողականություն,

տեսանելի ապագայում պահանջարկին համապատասխանելիություն, կամ գնահատվող օբյեկտն ունի ավելցուկային հզորություն/արտադրողականություն:

30. Այս մեթոդը կարող է օգտագործվել միայն որպես ստուգման մեթոդ՝ բացառությամբ այն դեպքերի, եթե առկա է նմանատիպ օբյեկտ՝ նույն նախագծային հզորությամբ, որը գտնվում է միևնույն աշխարհագրական տարածքում:

Ծախսերի և հզորությունների միջև կապը հաճախ գծային չէ, ուստի կարող է պահանջվել նաև որոշակի կամ անորոշ էքսպոնենտային ճշգրտում:

5. ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

31. Շարժական գույքի գնահատման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ֆինանսավորման պայմանները:

32. Շարժական գույքը կարող է հանդես գալ լիզինգի կամ ֆինանսական համաձայնագրի առարկա: Ֆինանսական համաձայնագրի շրջանակում նման օբյեկտն առանց պարտատիրոջ կամ վարձատուի նկատմամբ մնացորդային պարտավորությունները մարելու չի կարող վաճառվել: Կախված գնահատման նպատակից՝ կարող է նույնականացվել պարտավորություններով ծանրաբեռնված օբյեկտը և դրանց արժեքները ներկայացնել առանձին, ինչպես նաև առանձին ներկայացնել պարտավորություններով չծանրաբեռնված օբյեկտի արժեքները:

33. Օպերացիոն (կարճաժամկետ) վարձակալության պայմաններում պահվող Շարժական գույքը հանդես է գալիս որպես երրորդ անձանց սեփականություն: Նման դեպքերում, մինչ գնահատումը, պետք է սահմանվի, թե արդյոք այդ օբյեկտները հանդիսանում են գործառնական վարձակալության, ֆինանսական վարձակալության կամ վարձակալական ֆինանսավորման առարկա կամ վարկավորման այլ ձևերի շրջանակներում երաշխավոր: Գնահատման հետագա արժեքի տեսակը և մեթոդաբանությունն այնուհետև որոշվում են այդ հարցի վերաբերյալ ենթադրության հիման վրա և գնահատման ավելի լայն նպատակների դիտարկմամբ:

6. ՊԱՇԱՐՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

34. Պաշարի գնահատումը կարող է իրականացվել տարբեր նպատակներով: Գնահատողը պետք է հստակեցնի գնահատման նպատակը, ինչպես նաև պահուստներն առանձին և օբյեկտների հետ միասին գնահատելու հանգամանքը:

35. Հանգամանքները լինում են.

1) Ֆինանսական հաշվետվությունների մշակման համար պաշարների գնահատումը հաճախ պահանջում է կատարել վերլուծություններ՝ ձեռնարկատիրական գործունեության միավորումների հաշվառման, օբյեկտների ձեռքբերման, օտարման և արժեզրկման հետ կապված:

2) Հարկային հաշվետվություններ կազմելու համար պաշարների գնահատումը հաճախ պահանջվում է տրանսֆերային գների վերլուծության, գույքի հարկի պլանավորման և հաշվետվությունների, ինչպես նաև արժեքային հարկի չափի վերլուծության համար:

3) Պաշարների գնահատումը կարող է դատական գործընթացի առարկա հանդիսանալ՝ որոշակի հանգամանքներում գնահատման վերլուծություն պահանջելով:

4) Գնահատողից կարող է պահանջվել գնահատել Պաշարը, որպես ընդհանուր խորհրդատվության, գրավի տրամադրման, գործարքների աջակցության պարտավորությունների և անվճարունակության մաս:

36. Համեմատական մոտեցումը, որը կապված է համադրելի կամ համանման ապրանքների հետ, ունի միայն նեղ կիրառություն պաշարների գնահատման ժամանակ: Նման կիրառությունները հիմնականում ներառում են ապրանքային արտադրանքի պաշարներ կամ պաշարներ, որտեղ առկա է պաշարների շուկա արտադրական գործընթացի միջանկյալ փուլում: Ոչ առևտրային ապրանքների կամ այն ապրանքների համար, որոնց համար շուկան գոյություն ունի արտադրության միջանկյալ փուլում, նման բացթողման գները պետք է ճշգրտվեն նվազեցման ուղղությամբ՝ հաշվի առնելով շուկայավարման ծախսերը և հարակից շահույթը:

37. Պաշարների գնահատման համար համեմատական մոտեցման կիրառման նպատակահարմարությունը որոշելիս գնահատողը պետք է հետևի Ընդհանուր ստանդարտի 33-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված պահանջներին:

38. Պաշարների գնահատման համար համեմատական մոտեցումը պետք է կիրառվի հետևյալ դեպքերում.

1) առկա է գնահատման կամ դրան մոտ ամսաթվի դրությամբ համադրելի կամ համանման պաշարների գործարքների վերաբերյալ տեղեկություն,

2) առկա է բավարար տեղեկատվություն, որը թույլ կտա գնահատողին ճշգրտել գնահատվող պաշարների և գործարքներում ներգրավված համեմատվող պաշարների միջև եղած բոլոր էական տարբերությունները:

39. Եթե առկա են շուկայական գների տվյալներ, գնահատողը պետք է ճշգրտի դրանք՝ արտացոլելու գնահատվող պաշարների և գործարքներում ներգրավված համեմատվող պաշարների միջև եղած տարբերությունը: Ճգրտումներն անհրաժեշտ են պաշարների առարկայական տարբերակիչ առանձնահատկությունների արտացոլման և գործողություններին մասնակցող անձանց համար: Նման ճշգրտումները սահմանվում են միայն որակական, այլ ոչ թե քանակական գործոնների նկատմամբ:

40. Պաշարների գնահատման ժամանակ եկամտային մոտեցման կիրառումը պահանջում է գնահատման ամսաթվից առաջ կատարված շահույթի (արժեքի) բաշխում, գնահատման ամսաթվից հետո կատարված շահույթի (արժեքի) համեմատ:

41. Պաշարների գնահատման համար եկամտային մոտեցման կիրառման նպատակահարմարությունը որոշելիս գնահատողը պետք է հետևի Ընդհանուր ստանդարտի 35-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված պահանջներին:

42. Նվազման մեթոդը մնացորդային մեթոդ է, որն սկսվում է վաճառքի ենթադրյալ գնից՝ նվազեցնելով մնացած ծախսերն ու ակնկալվող շահույթը:

43. Նվազման մեթոդը կիրառվում է հետևյալ հաջորդականությամբ.

1) Վաճառքի ենթադրյալ գնի գնահատում. Տեղեկատվության առկայության դեպքում գնահատողը պետք է հիմնվի վաճառքի գների ուղղակի դիտարկումների վրա:

2) Ավարտման ծախսերի գնահատում (միայն ընթացքի մեջ գտնվող աշխատանքներ): Ավարտման ծախսերը պետք է ներառեն ուղղակի կամ անուղղակի մնացած բոլոր ծախսերը, որոնք պետք է կատարվեն գնահատման ամսաթվից հետո, ընթացքի մեջ գտնվող աշխատանքներն ավարտելու համար: Ապագա ժամանակահատվածում ծախսերը բացառելու համար ավարտման ծախսերը գնահատողի կողմից պետք է ճշգրտվեն:

3) Օտարման ծախսերի չափով նվազեցում: Օտարման ծախսերն այն ծախսերն են, որոնք պետք է կատարվեին գնահատման ամսաթվից հետո՝ պատրաստի արտադրանքը վերջնականապես գնորդին հասցնելու համար: Օտարման ծախսերը պետք է ճշգրտվեն ապագա ժամանակահատվածում օգուտ բերելու ծախսերը բացառելով: Օտարման ծախսերը ճիշտ որոշելու համար Պաշարների ցիկլի յուրաքանչյուր ծախս (ներառյալ անուղղակի վերադիր ծախսերը) պետք է դասակարգվի որպես կատարված և, հետևաբար, ներառվի պատրաստի ապրանքների պաշարների արժեքի մեջ կամ մնացորդին, որոնք կատարվելու են օտարման գործընթացում:

4) Աշխատանքի ավարտից (միայն ընթացքի մեջ գտնվող աշխատանք) և օտարման գործընթացից գնահատված շահույթի չափով նվազեցում: Մեկնարկային կետը կարող է լինել տնտեսավարող սուբյեկտի գործառնական շահույթի օգտագործումը:

5) Անհրաժեշտ պահպանման ծախսերի դիտարկում: Պահպանման ծախսերը կարող են անհրաժեշտ լինել գնահատել՝ հաշվի առնելով պաշարների վաճառքի ժամանակի հետ կապված հնարավոր ծախսերը: Գնահատողը պետք է հաշվի առնի նաև օբյեկտի պահպանման ժամանակահատվածում պահանջվող եկամտաբերությունը որոշելիս առաջացած ռիսկը: Ռիսկերը կարող են կախված լինել պաշարների կյանքի ցիկլի տևողությունից և վերջնական պատվիրատուների հետ պայմանագրային հարաբերություններից:

44. Գնահատողն ավարտման ծախսերը, օտարման ծախսերը և շահույթի մարժաները որոշելիս պետք է պարզի և բացառի ցանկացած ծախս, որը նախատեսված է ապագա տնտեսական օգուտներ ապահովելու համար և անհրաժեշտ չէ ընթացիկ ժամանակահատվածի եկամուտ ստանալու համար:

45. Նվազման մեթոդի կիրառման ժամանակ գնահատողը պետք է հաշվի առնի առանցքային քայլերի պատշաճ կիրառման համար բավարար տեղեկատվության առկայությունը:

46. Գնահատողը կարող է օգտագործել Աճման մեթոդը Նվազման մեթոդով ստացված արժեքը հաստատելու համար: Աճման մեթոդը կիրառվում է հետևյալ հաջորդականությամբ.

- 1) Պաշարի հաշվեկշռային արժեքի որոշում,
- 2) կատարված գնման և պահպանման ծախսերի ավելացում,
- 3) կատարված ծախսերն ավելացնելու լրացուցիչ ծախսեր (գնման և արտադրության ծախսեր),
- 4) կատարված ծախսերին շահույթի ավելացում:

47. Ապահովագրված ծախսերը որոշելիս գնահատողը պետք է հաշվի առնի տնտեսավարող սուբյեկտի ներսում մշակված ոչ նյութական ակտիվները, որոնք նպաստել են աշխատանքների ավարտին:

48. Ծախսային մոտեցման կիրառման դեպքում պաշարների գնահատման հիմնական մեթոդը փոխարինման արժեքի մեթոդն է: Պաշարները սովորաբար գնահատվում են ընթացիկ փոխարինման արժեքի մեթոդով:

49. Պաշարների գնահատման համար ծախսային մոտեցման կիրառման նպատակահարմարությունը որոշելիս գնահատողը պետք է հետևի Ընդհանուր ստանդարտի 37-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված պահանջներին:

50. Ընթացիկ վերականգնման արժեքի մեթոդը ԸՎԱՄ (CRCM) կարող է շուկայական արժեքը ճիշտ արտացոլել պաշարը հեշտությամբ մեծածախ կամ մանրածախ առևտրով փոխարինելու դեպքում:

51. Պաշարների շուկայական արժեքը կարող է գնահատման ամսաթվի դրությամբ նույնականացվել հաշվեկշռային արժեքին՝ հաշվի առնելով որոշակի ճշգրտումներ, մասնավորապես.

- 1) սկզբնական գնումների արժեքի հիման վրա ՍԳԱ (FIFO),
- 2) ապրանքների գների տատանման կամ պաշարների շրջանառությունը դանդաղ լինելու դեպքում հաշվեկշռային արժեքը պետք է ճշգրտել շուկայական գների փոփոխություններն արտացոլելու համար,
- 3) հաշվեկշռային արժեքը նվազեցվում է հնացած և թերի ապրանքների հաշվին,

4) հաշվեկշռային արժեքը նվազեցվում է հաշվապահական հաշվետվություններում նշված պաշարների և փաստացի պաշարների միջև եղած տարբերությամբ (գողություն, վնաս, սխալ հաշվառում, սխալ չափման միավորների կորուստներ),

5) հաշվեկշռային արժեքն ավելացվում է հումքի պատրաստման հետ կապված ծախսերով (գնման, պահպանման և մշակման ծախսեր):

52. Պաշարների գնահատման վերաբերյալ հատուկ դատողություններն են.

1) լրացված արժեքի գործընթացների և ոչ նյութական ակտիվների շահույթների նույնականացում,

2) կապ այլ ձեռք բերված օբյեկտների հետ,

3) հնացած պաշարներ (պահուստներ),

4) հաշվարկային միավոր,

5) այլ դատողություններ:

53. Պաշարների գնահատումը ներառում է շահույթի բաշխումը չափման ամսաթվից առաջ ստացված շահույթի և չափման ամսաթվից հետո ստացված շահույթի միջև: Գործնականում ստացված շահույթը չի կարող ծախսերին համաչափ լինել:

54. Գնահատողը պետք է պահպանի պաշարների և այլ օբյեկտների կամ պարտավորությունների գնահատման ժամանակ օգտագործվող ենթադրությունների հետևողականությունը:

55. Գնահատողը պետք է հաշվի առնի հնացած պաշարների մնացորդները: Պաշարների պահուստային մնացորդները կիրառվում են ոչ թե ամբողջ պաշարների մնացորդի նկատմամբ, այլ այն պաշարների նկատմամբ, որոնց դեպքում կիրառվել է պահուստը:

56. Հնացած պաշարները, որոնք ճշգրտվել են պաշարների պահուստի համար, չեն գնահատվում, քանի որ այն ճշգրտվել է իրացման զուտ արժեքից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Բ. ԲԱԴԱԼՅԱՆ